ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

6 դեկտեմբերի ուրբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

171
(3021)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՀԱՅՏՆԻ ՖՈՒՖԱԿՈՒՄ ԲՈՒՀԵՐԻ ՌԵԿՏՈՐՆԵՐԸ ԿԱ՞Ն

Հայաստանում «պադավատապետությունը», ի դեմս Երեւանի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտորի, ապացուցված է:

Նոյեմբերի 22-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը սոցցանցերի իր էջերում հրապարակել էր տեսանյութ եւ գրել էր. «Կրճատում եմ ծառայողական ավտոմեքենաների թիվը. ավելի մանրամասն՝ այսօրվա հարցազրույցում»:

Ավելի ուշ Հանրային հեռուստաընկերությանը տված հարցազրույցում Փաշինյանը, ինչպես սիրում էր հեղափոխության ժամանակ ասել, նշեց, որ ծառայողական մեքենաները կրճատելու են եւ վերջ դնեն «պադավատապետությանը», եւ սա արվում է բյուջեի գումարներն անիմաստ չմսխելու համար:

Նիկոլ Փաշինյանի պայքարի ֆոնին «պադավատապետությունն» այնքան ուժգին ամրացավ, որ պաշտոնյաները սկսեցին ծառայողական մեքենաները ծառայեցնել անձնական շահի համար, ինչպես օրերս արել է ՀՊՏՀ ռեկտորը:

Բանն այն է, որ Shamshyan.com-ը գրել էր, թե դեկտեմբերի 4-ին խոշոր ավտովթար է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 22:30-ի սահմաններում Մյասնիկյան պողոտայում բախվել են Mercedes եւ Honda մակնիշի ավտոմեքենաները:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Honda մակնիշի էլեկտրոմոբիլը կցված է «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առեւտրային կազմակերպությանը (ՊՈԱԿ), իսկ ղեկին եղել է Տնտեսագիտական համալսարանի ռեկտոր Արմեն Գրիգորյանը: Հարկ է նշել, որ մեքենան գրանցված է եղել Գրիգորյանի վարորդի անունով:

Տեղեկացանք նաեւ, որ ռեկտոր Գրիգորյանը պարբերաբար պետության հաշվեկշռում գտնվող մեքենան օգտագործել է սեփական շահերի սպասարկման համար: Սա բավական չէ՝ ոչ աշխատանքային ժամին վարելով ՀՊՏՀ ՊՈԱԿ-ին կցված մեքենան՝ վթարի էպիկենտրոնում է հայտնվել եւ վնասվածքներ է ստացել: Ահա թե ինչ տեսք ունի հեղափոխական իշխանության «պադավատապետությունը», երբ ծառայողական մեքենայով ոչ աշխատանքային ժամին, ինչպես կասեր Փաշինյանը՝ «ճռիկ-վռիկներ» է անում ՀՊՏՀ ռեկտորը:

Հետաքրքիր է, թե այս երեւույթին ինչպես է վերաբերվում Փաշինյանը, եւ արդյոք հայտնի ցուցակում կան նաեւ բուհերի ռեկտորները:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՔՊ խմբակցության պատգամավոր Կարեն Սարուխանյանի մորաքրոջ որդին սկանդալի կենտրոնում է հայտնվել: Մանրամասնենք. պատգամավորի մորաքույրը Նելլի Խոջումյանն է, որը Շիրակի մարզի Կապս գյուղի դպրոցի տնօրենն է, իսկ որդին՝ այսինքն ՔՊ-ական պատգամավորի մորաքրոջ որդին, «Արփի լիճ» ազգային պարկի փոխտնօրենն է: Ըստ մարզում տարածված լուրերի՝ պատգամավորի եղբայրը վերջերս «Աջարաբեթ» բուքմեյքերական ընկերությունում տանուլ է տվել 4 մլն ՀՀ դրամ: ArmLur.am-ը կապ հաստատեց Կապս գյուղի դպրոցի տնօրեն Նելլի Խոջումյանի հետ՝ մեկնաբանություն ստանալու, վերջինս մեզ հետ զրույցում հերքեց տեղեկությունը՝ ասելով, որ առաջին անգամ է լսում այդ մասին: ArmLur.am-ը կապ հաստատեց նաեւ ՔՊ պատգամավոր Կարեն Սարուխանյանի հետ՝ կրկին մեկնաբանություն ստանալու նպատակով, Սարուխանյանը շատ վրդովվեց մեր հարցից ու ասաց, թե տեղեկություն չունի: «Իմ մորաքույրը հեղափոխությունից առաջ էլ է այդ դպրոցի տնօրենը եղել: Ես գիտե՞ք՝ քանի հորքուրի տղա կամ մորքուրի տղա ունեմ, ուզո՞ւմ եք բազա տրամադրեմ», - արձագանքեց նա: Երբ կրկնեցինք, որ հարցը մորաքրոջ մասին է, որի որդին գումար է տանուլ տվել, Կարեն Սարուխանյանը ասաց, թե արդեն մեր հարցին պատասխանել է:

Շատերը հիշում են Ռոբերտ Քոչարյանի մեղադրանքը ջանասիրաբար պաշտպանող, հատուկ քննչական ծառայության հատկապես կարեւոր գործերով քննիչ Հրաչյա Մուշեղյանի կարիերայի վայրիվերումները, երբ վերջինս նախկին նախագահների քրեական գործերին զուգահեռ դարձավ ՀՔԾ-ում վարչության պետ, ապա անսպասելի լքեց պետական համակարգը: Ահա սույն նախկին պաշտոնյան հարբած (ինչպես իր համոզմամբ՝ Ռոբերտ Քոչարյանը 2008 թվականի մարտի 1-ին), ոչ սթափ վիճակում ինքն է դարձել ճանապարհատրանսպորտային պատահարի մեղավոր-մեղադրյալ՝ մարդկանց մահվան եւ առողջությանը ծանր վնասվածքներ հասցնելու դեպքով: Ընդունում է Մուշեղյանը իր մեղավորությունը, թե ոչ, պարզ կլինի առաջիկա դատավարության ընթացքում:



Հեղափոխության ժամանակահատվածում «Մոբայլ Սենթր Արթ» ՍՊԸ-ում մենեջեր աշխատած Արգիշտի Մեխակյանը 6 տարի անց դարձավ ՀՀ Արմավիրի մարզի մարզպետ: Նոյեմբերի 26-ին ՔՊ-ի կողմից Արմավիրի մարզպետ առաջադրված խոյ համայնքի ղեկավար Արգիշտի Մեխակյանը երեկ Կառավարության որոշմամբ ընտրվեց Արմավիրի մարզպետ: Մեխակյանը 2007 թվականից աշխատել է տարբեր գերատեսչություններում: Սկզբում աշխատել է Էջմիածնի քաղաքապետարանում՝ որպես վերահսկողության բաժնի երկրորդ կարգի մասնագետ, 2008-2010 թվականներին՝ Էջմիածնի քաղաքապետարանի ֆինանսական բաժնի առաջին կարգի մասնագետ, 2010-2014 թվականներին՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի օգնական եւ այդպես շարունակ: Իսկ 2017-2018 թվականներին՝ հեղափոխության ժամանակ, եղել է «Մոբայլ Սենթր Արթ» ՍՊԸ-ի մենեջեր: Հաղթական «թավշյա հեղափոխությունից» հետո Մեխակյանը միանգամից 2018 թվականի օգոստոսից միչեւ 2019 թվականի հունվար զբաղեցրեց Էջմիածին համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնը: Մեխակյանը եղել է նաեւ ԱԺ «Իմ քայլը» խմբակցության պատգամավոր, իսկ մինչ մարզպետ դառնալը եղել է Խոյ համայնքի համայնքապետ: Արգիշտի Մեխակյանը 2023 թվականի անշարժ գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի հայտարարագիր ներկայացրել է որպես Խոյի համայնքապետ: Հայտարարագրի համաձայն՝ Մեխակյանն ունի մեկ անհատական բնակելի տուն Վաղարշապատ համայնքում, որը ձեռք է բերել 2014 թվականին: Հայտարարագրել է մեկ Toyota մակնիշի մեքենա, որը ձեռք է բերել 2019 թվականին: Կանխիկ դրամական միջոցները, նախորդ տարվա հետ համեմատած, նվազել են 100 հազար դրամով՝ 1 մլն դրամից դարձել են 900 հազար դրամ: Արգիշտի Մեխակյանի՝ 2023 թվականի տարեկան եկամուտները կազմել են 17 մլն 358 հազար դրամ, որից 6 մլն 43 հազարը աշխատանքի վարձատրություն է Խոյի համայնքապետարանի աշխատակազմից:

ԶՐՈՒՅՑ

«ՄԱՐԴԻԿ ԻՐԵՆՑ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ ՄԻԱՆՈՒՄ ԵՆ», ՍՐԲԱԶԱՆ

Բագրատ Սրբազանը խոսել է Սրբազան շարժման առաջիկա անելիքների մասին:

Մեզ հետ զրույցում Բագրատ Սրբազանը անդրադարձել է նաեւ ԱԺ անկախ պատգամավոր Գեղամ Նազարյանի հայտարարությանը, թե ընդդիմության օրակարգը Նիկոլ Փաշինյանի հեռանալը չէ, ինչպես նաեւ խոսել է ՔՊ-ում կատարվող վերջին իրադարձություններից:

-Սրբազան հայր, ի տարբերություն իշխանությունների, որ ամեն օր նոր օրակարգ են բերում, շարժումը, կարծես, վերջին շրջանում բավականին պասիվ է: Ինչո՞վ է պայմանավորված, որ հավաքներ եւ ակցիաներ չեն իրականացվում:

-Եթե փողոցում ակտիվ ներկայության մասին է խոսքը, ապա դա ուրիշ հարց է, բայց շարժումը շատ ակտիվ ծավալում է՝ իր գործունեությունը թե՛ հանդիպումներով, թե՛ ծրագրով: Մենք պարզապես ցանկանում ենք որոշակիացնել այն ամենն ինչ ունենք մեր մտքում՝ որպես մարտավարություն:

Արդեն մի քանի անգամ նշել եմ այդ մասին. երբ դուրս գանք փողոց, պետք է վերջացնենք ամեն բան:

-Իսկ ե՞րբ եք նախատեսում կրկին դուրս գալ փողոց: Վերջերս հայտարարեցիք, որ կրկին փողոց եք դուրս գալու, սակայն չնշեցիք, թե հստակ երբ եւ ինչ օրակարգով:

-Դա հավիտենական հարց է, չէ՞: Օրակարգը մեկն է՝ հեռացում, չարիքի հեռացում: Դուք ամեն օր ականատես եք՝ հատկապես հոգեւոր, բարոյական եւ արժեքային իմաստով ինչպիսի կազմաքանդման եւ քայքայման է ենթարկվում մեր պետությունը: Եվ, բնականաբար, օրակարգը չարիքի հեռացումն է: Դրա իրականացման համար բավականին լուրջ ծրագրված քայլեր պետք է լինեն, որի մասին խոսելը դեռ վաղ է:

-Իսկ կա՞ հստակ օր, որ կարող եք նշել մեկնարկի համար:

-Այս պահին հստակ նշել չեմ կարող, բայց մեր մտքում կա:

-Իսկ ո՞ւմ հետ եք այս օրերին քննարկումներ ունենում:

-Մեր ակտիվների, ժողովրդի, եւ ոչ միայն Երեւանում, այլ նաեւ տարբեր շրջաններում: Ես շատ ուրախ եմ, որ մարդկանց տարբեր խմբեր, հենց իրենց նախաձեռնությամբ, գալիս են հանդիպելու եւ քննարկումներ ունենալու: Դա ավելի մեծ ուրախություն է:

-Սրբազան հայր, մինչ դուք ծրագրերի իրականացման փուլում եք, իշխանությունը պատրաստվում է ընտրությունների, միգուցե ինչ-ինչ զարգացումներով՝ արտահերթ ընտրությունների, նման օրակարգ դուք ունե՞ք:

-Ես չգիտեմ՝ իրենք ինչ են պատրաստվում, սակայն այն, ինչ այսօր է կատարվում, ո՛չ հերթական, ո՛չ էլ արտահերթ ընտրությունների հետ կապ չունի: Պարզապես փտածությունը այն աստիճանի է հասել, որ ստիպված են որոշ քայլերի գնալ, քանի որ այլեւս չեն կարող թաքցնել: Հիմա դրանով եթե կփորձեն ներկայացում անել, միեւնույնն է, նկատելի է, որ սուտ է: Առաջին հերթին՝ պարզապես անհնար է թաքցնել այդ վիճակը:

Երկրորդ՝ մամուլում հայտնվեց թմրանյութերի օգտագործման մասին նյութ, որին հավելել եմ, որ ոչ միայն նշված անունների անձինք, այլեւ իրենց «գլխավորն» է պարտավոր գնալ՝ թեստ հանձնելու, որովհետեւ իրենց վարքագիծը ողջամիտ կասկածներ է առաջացնում: Մեկ-երկու անգամ մամուլում նման նյութերի հայտնվելուց հետո արագ կասեցվեց դա՝ դաշտ բերելով այլ թեմաներ, որոնք պարզապես քննարկվում են:

Հիմնական թեմա կա՝ իրենց վարքը, կենցաղը եւ այն ամենն ինչի մեջ ներգրավված են:

Երրորդը՝ ինչի մասին մի անգամ էլ եմ խոսել. մեր մտքերի մեջ սրանց անպարտելի լինելու միֆը պետք է մի կողմ թողնենք: Այդ միֆը նրանք են փորձում ներշնչել մեզ, իսկ մենք խայծը կուլ ենք տալիս:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

ՓԱՇԻՆՅԱՆԻՆ ԷԼԻ «ԱՆՈՒՆՆԵՐ ԵՆ ՏՎԵԼ»

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունում մեղադրյալների շարքն ընդլայնվում է: Թիմից արտահոսք կազմակերպածները Նիկոլ Փաշինյանի մոտ էլի անուններ են հնչեցրել:

Այսպիսով՝ դեկտեմբերի 3-ին, ՔՊ վարչության որոշմամբ, Հովիկ Աղազարյանը կուսակցությունից հեռացվեց պետական եւ կուսակցական նշանակության կոնֆիդենցիալ տեղեկության արտահոսքերի, ինչպես նաեւ բարոյական նորմերի խախտման համար:

ՔՊ վերնախավը՝ Ալեն Սիմոնյանը, Հայկ Կոնջորյանը եւ Արթուր Հովհաննիսյանը, մեկը մյուսին հերթ չտալով, խոսում էին, թե շոկի մեջ են Աղազարյանի մասին բացահայտումներից, ամաչել են, թե ինչեր են կարդացել, ինչ են բացահայտել Հովիկ Աղազարյանի մասին:

ՔՊ-ականները, սակայն, այդպես էլ չէին հստակեցնում, թե ինչ «շոկային բացահայտումներ» են արել, եւ այդ ինչ արտահոսք է թույլ տվել Հովիկ Աղազարյանը, որի համար հեռացվեց ՔՊ-ից:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Նիկոլ Փաշինյանի մոտ, Հովիկ Աղազարյանից բացի, էլի մեղադրյալների անուններ են հնչեցվել, ովքեր կասկածվում են թիմից արտահոսք կազմակերպելու համար: Թե ովքեր են՝ դեռ անուններ չի նշվում, բայց Նիկոլ Փաշինյանը ուշիուշով հետեւում է իր թիմակիցներին, որպեսզի հարմար պահի նրանց նույնպես պատժի:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ,
Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՈՎ Է ՀԱՋՈՐԴ ՊԱՇՏՈՆՅԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ արդարադատության նախարար Սրբուհի Գալյանը նաեւ պաշտոնից կազատի Քրեակատարողական ծառայության պետ Ամբակում Գրիգորյանին, որովհետեւ այդ հարցը նախարարության ներսում քննարկվել է, եւ կա քաղաքական իշխանության համաձայնությունը, որ Ամբակում Գրիգորյանին հրաժեշտ տան:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր. «Արդարադատության նորանշանակ նախարար Սրբուհի Գալյանը կամաց-կամաց ազատվում է իր տեղակալներից: Նոյեմբերի 5-ին, երբ Գալյանը նշանակվեց նախարար, մոտ երկու շաբաթ անց՝ նոյեմբերի 22-ին, պաշտոնից ազատեց նախարարի տեղակալ Արմենուհի Հարությունյանին. նախարարի տեղակալ Կարեն Կարապետյանը օրեր անց եւս լքեց պաշտոնը: Մեր աղբյուրները փոխանցում են, որ սա դեռ սկիզբն է: Գալյանը կադրային ջարդը սկսել է իր տեղակալներից ու շարքը շարունակական է լինելու՝ իջնելով ներքեւ»:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՂԱԶԱՐՅԱՆԸ՝ ՆԱՄԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երեկ՝ դեկտեմբերի 5-ին, ԱԺ-ում լրագրողների հետ զրույցում արդեն անկախ պատգամավոր Հովիկ Աղազարյանը նշեց. «Թող գնահատեն իմ նամակագրությունը, թե ինչքանով է այն շոկային: Ես չեմ ասում՝ նայեն այն նամակագրությունը, որտեղ ինձ վրա ճնշումներ են եղել, որ պատերազմից հետո թիմից դուրս գամ, կամ վարչապետին ընդդիմանամ, դրանք պետք չէ նայել»:

Հարցին՝ ո՞ւմ կողմից է եղել՝ նա վրդովված պատասխանեց. «Դե հիմա ի՞նչ կարեւոր է, սեւ շան:

Այն գրառումները, որտեղ, որ ինձ վրա բազմաթիվ ճնշումներ են եղել, տարբեր առաջարկություններ են արվել, եւ թե ես ինչ պատասխաններ եմ տվել, դրանք, երեւի, չկան վարչապետի կամ վարչության սեղանին: Ես չեմ ամաչում եւ համաձայն եմ նույնիսկ, որ կին լրագրող գա, բայց պինդ ներվերով, որ հասկանա, թե ինչն ինչոց է, որը որտեղից է, որ Աղազարյան Հովիկը հասկացել է, որ իր դիմաց ագենտ է եւ ման լացացրել է: Եղա՞վ»,- ասաց նա:

ՆՈՐ ՄԱՐԶՊԵՏԸ

Արգիշտի Մեխակյանը նշանակվել է Արմավիրի մարզպետ: Այդ մասին Կառավարության նիստին հայտարարեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

«Շնորհակալություն եմ հայտնում ՀՀ Արմավիրի մարզպետի պաշտոնում ինձ առաջադրելու համար: Ինձ համար չափազանց մեծ պատիվ է ստանձնել Արմավիրի մարզպետի պաշտոնը եւ մեծ պատասխանատվություն՝ անմիջական ներգրավվածություն ունենալ հարազատ մարզի զարգացման եւ հզորացման գործում: Քաջատեղյակ լինելով մարզի խնդիրներին՝ես ամեն ինչ անելու եմ, որպեսզի արդարացնեմ ինձ վստահող մարդկանց եւ Արմավիրի մարզի բնակչության ակնկալիքները»,- ասաց Արգիշտի Մեխակյանը:

«Պարոն Մեխակյանը մինչեւ վերջերս Խոյ խոշորացված համայնքի ղեկավարն էր, դրանից առաջ՝ ԱԺ պատգամավոր եւ դրանից առաջ՝ Արմավիրի մարզպետի տեղակալ: Եվ նկատի ունեմ՝ վերջին տարիներին ներգրավված է եղել պետական կառավարման համակարգում: Ես ուրախ եմ նաեւ, քանզի վերջին շրջանի նշանակումների ժամանակ հաճախ եմ անդրադառնում այս խնդրին, որ մի ժամանակ մեր քաղաքական թիմի մասին ասում էին՝ սովորաբար երիտասարդ եւ անփորձ են, հիմա մենք արդեն անցել ենք այն շեմը, որ կարող ենք ասել՝ երիտասարդ եւ փորձառու, ինչը կարծում եմ՝ վատ չէ: Իհարկե՝ ոչ միայն երիտասարդ, փորձառությունը շատ կարեւոր է: Մեզ բոլորիս հաջողություն եմ մաղթում առաջիկա օրակարգերի իրագործման հարցում», - ասաց Նիկոլ Փաշինյանը:

Հիշեցնենք՝ Դավիթ Խուդաթյանն ազատվել է Արմավիրի մարզպետի պաշտոնից եւ նշանակվել ՏԿԵ նախարար:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ կայանալիք կառավարության նիստում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ կնշանակվի Արգիշտի Մեխակյանը:

Արգիշտի Մեխակյանը քաղաքական դաշտ է եկել 2018 թվականի հեղափոխությունից հետո: 2018 թվականի դեկտեմբերի 9-ին ընտրվել է Ազգային ժողովի պատգամավոր «Իմ քայլը» կուսակցությունների դաշինքի թիվ 6 ընտրատարածքի տարածքային ընտրական ցուցակով: 2020 թվականի դեկտեմբերի 3-ին վայր է դրել պատգամավորական մանդատը:

2020 թվականի դեկտեմբերի 15-ին նշանակվել է ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ: 2021 թվականի դեկտեմբերի 5-ին ազատվել է պաշտոնից:

ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԿԼԻՆԻ

Ազգային ժողովի նախագահ, «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության վարչության անդամ Ալեն Սիմոնյանը հաստատեց, որ կուսակցությունում կան մարդիկ, որոնք կասկածվում են տեղեկության արտահոսք կազմակերպելու համար: Սիմոնյանն այս մասին ասաց լրագրողների հետ ճեպազրույցում:

«Լինելու է հետաքննություն: Մենք վարչության որոշում ունենք, որ այն բոլոր մարդիկ, ովքեր կեղծանուններով, ծածկանուններով պետական գաղտնիք ներկայացնող նյութեր են արտահոսք տալիս եւ պատվերներ են անում, հեռացվելու են թե՛ կուսակցությունից, թե՛ զբաղեցրած պաշտոնից», - ասաց Սիմոնյանը:

ԻՐԱՎԻՃԱԿ

150 ՀԱԶԱՐ ՓԱԽՍՏԱԿԱՆ՝ ՀԱԼԵՊՈՒՄ

Մեկ շաբաթվա ընթացքում Հալեպի նահանգում մարտերի պատճառով ավելի քան 150 հազար սիրիացի է տեղահանվել, եւ նրանց թիվը շարունակում է աճել:

Ինչպես փոխանցում է ՌԻԱ Նովոստին, այս մասին X-ի միկրոբլոգում հայտնել է Սիրիայում ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի ներկայացուցիչ Գոնսալո Վարգասը:

«Հալեպում եւ շրջակայքում մարտերի պատճառով հարկադրված փախուստի դիմած սիրիացիների թիվն արագորեն աճում է եւ մեկ շաբաթում հասել է 150 հազարի: Այս թիվը, ամենայն հավանականությամբ, կշարունակի աճել», - նշված է նրա գրառման մեջ:

ՌԴ ԱԳՆ-Ն ԶՐՈՅԱԿԱՆ Է ՀԱՄԱՐՈՒՄ ՓՈԽՔԻՔՈՒՄԸ ՈՒԿՐԱԻՆԱՅԻՆ

Ուկրաինայում կարգավորման հարցում Մոսկվայի եւ Կիեւի դիրքորոշումներն ակնհայտորեն անհամատեղելի են, ուստի փոխզիջման հասնելու հնարավորությունն այժմ զրոյական է:

Ինչպես հայտնում է «ՌԻԱ Նովոստին», այս մասին հայտարարել է ՌԴ փոխարտգործնախարար Սերգեյ Ռյաբկովը՝ CNN-ին տված հարցազրույցում:

Նրա խոսքով՝ հունիսի 14-ին նախագահ Վլադիմիր Պուտինը ուրվագծել է Ռուսաստանի Դաշնության դիրքորոշումը:

«Մենք գիտենք, թե ինչ է ասում Զելենսկին իր ծրագրերում եւ առաջարկներում: Եթե համեմատեք այս երկու դիրքորոշումները, կտեսնեք, որ դրանք, ըստ երեւույթին, անհամատեղելի են: Փոխզիջման շանսերն այժմ հավասար են զրոյի»,- ասել է Ռյաբկովը:

ԹՈՒՐՔԻԱՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄ Է ԵՐԿԽՈՍԵԼ ԱՍԱԴԻ ՀԵՏ

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը բազմիցս խոսել է հարաբերությունների կարգավորման թեմայով Սիրիայի նախագահ Բաշար ալ-Ասադի հետ շփումներ ունենալու պատրաստակամության մասին, սակայն նա պատասխան չի տվել:

Ինչպես փոխանցում է ՏԱՍՍ-ը, այս մասին Անկարայում լրագրողներին հայտնել է Թուրքիայում իշխող «Արդարություն եւ զարգացում» կուսակցության պաշտոնական ներկայացուցիչ Օմեր Չելիքը:

Նրա խոսքով՝ վերջին ամիսների ընթացքում Թուրքիայի նախագահը բազմիցս հայտարարել է նորմալացման գործընթացի եւ համապատասխան շփումների անհրաժեշտության մասին, սակայն, նրա գնահատմամբ, սիրիական կողմը դանդաղ է գործել եւ անկարողություն ցուցաբերել համապարփակ դիվանագիտական գործողություններ նախաձեռնելու հարցում:

ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ ՊԱՏԱՀԱԿԱՆ ՄԱՐԴԻԿ ՉԷԻՆ

ՈՎ Է ԸՆՏՐՎԵԼ ԿԿՀ ՆՈՐ ԱՆԴԱՄ

ԱԺ-ն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամ ընտրեց Արմեն Մարուխյանին 63 կողմ ձայնով:

Լուսինե Ազարյանը չընտրվեց՝ հավաքելով 2 կողմ, 7 դեմ ձայներ, մնացած քվեաթերթիկներն անվավեր են ճանաչվել:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր. «Պետական բարձրաստիճան պաշտոնները լրացվում են ՀՀ դատախազության կադրերով: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի թեկնածուներից մեկը գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի հրահանգով պաշտոնից ազատված դատախազ է: Ինչպես հայտնի է, երկու թեկնածու կա սահմանադրական այդ կարեւորագույն անկախ մարմնի անդամի համար: Արմեն Մարուխյանի եւ Նարինե Ազարյանի թեկնածությունները մրցութային խորհրդի որոշման հիման վրա առաջարկվել են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում:

Իսկ ովքեր են նրանք. ամենեւին՝ ոչ պատահական մարդիկ: Այս տարվա մայիսի 3-ին Ազգային ժողովի Պետահիրավական հարցերով մշտական հանձնաժողովի նիստում, երբ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը տարեկան հաշվետվությունն էր ներկայացնում, պատգամավոր Արծվիկ Մինասյանը հարց բարձրացրեց Արմեն Աշոտյանի գործով, դատախազը պատասխանեց, որ Արմեն Աշոտյանի վերաբերյալ քրեական գործով «պետությանը պատճառվել է 905.194.706 դրամի գույքային վնաս: Մեղադրյալի կողմից պատճառված վնասն ամբողջությամբ վերականգնվել է»: Մինչդեռ Աշոտյանի փաստաբանները հայտարարեցին, որ դա զրպարտություն է, որ դատարանի 16.04.2024թ. որոշմամբ հաստատվել է, որ այս գործով պետությանը որեւէ վնաս չի պատճառվել, ո՛չ Արմեն Աշոտյանը եւ ո՛չ էլ որեւէ այլ մեղադրյալ որեւէ «վնաս» չեն «վերականգնել», որովհետեւ պաշտպանող կողմը գործը համարում է շինծու եւ չի ընդունում մեղադրանքը:

«Ժողովուրդ» օրաթերթը բացահայտեց, որ այս բարձրաձայնումներից հետո Աննա Վարդապետյանը, վերադառնալով աշխատանքի, ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական եւ իրավական ապահովման վարչության պետ Արմեն Մարուխյանին հրահանգել էր ազատման դիմում գրել ու հեռանալ: Եվ հիմա այդ պաշտոնյան՝ Արմեն Մարուխյանը, ցանկանում է գնալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ մրցույթին բավականին պրոֆեսիոնալ մասնակիցներ են եղել: Օրինակ՝ փոխվարչապետ Միհեր Գրիգորյանի նախկին օգնական Արսեն Մանուկյանը, սակայն նա չի հաղթահարել մրցույթը, ու այս հանգամանքը շատ կասկածելի է եղել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի աշխատակազմի համար, քանի որ նա բավականին պատրաստված է ներկայացել: Բայց պրոֆեսիոնալների մերժումն ու հնարավոր կառավարելի մարդկանց ներգրավումը անկախ մարմնում միայն մի բանի մասին է վկայում. Փաշինյանի իշխանությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը փորձում է դարձնել Կառավարությանը կից մի կառավարելի վարչություն՝ կառավարելի կադրերով, որպեսզի հանձնաժողովի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար Մարիամ Գալստյանը կարողանա հետագայում հեշտությամբ անդամների կողմից հանձնաժողովի նախագահ ընտրվել:

Հավելենք, որ ըստ մամուլի՝ Մարիամ Գալստյանը ԱԺ պատգամավոր Արուսյակ Ջուլհակյանի եւ ՆԳ նախարար Արփինե Սարգսյանի մտերիմ ընկերուհին է: Մինչդեռ թեկնածուն պետք է բոլորին անծանոթ եւ անձնական կապեր չունեցող կերպար լինի»:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի նախագահ Իշխան Զաքարյանը, փոխնախագահ Վրեժ Շառոյանը (Սիրիա) եւ նախագահի օգնական Սարգիս Վաթյանը Հյուսիսային Ամերիկա աշխատանքային այցի շրջանակներում Լաս Վեգասի արդեն բավականին հայաշատ քաղաքում հանդիպումներ ունեցան նոր ձեւավորված քաղաքային խորհրդի անդամների եւ գործարար շրջանակների ներկայացուցիչների հետ:

Լաս Վեգասի քաղաքային խորհրդի նախագահ Հայկ Սահակյանը ներկայացնելով կատարված աշխատանքներն ասաց, որ արդեն ձեւավորվել են ֆուտբոլի, բասկետբոլի եւ կանանց վոլեյբոլի թիմերը, ունեն նաեւ որոշ մարզիկներ անհատական մարզաձեւերից: Ուրվագծվել է անհատ բարերարների այն շրջանակը եւս, ովքեր ֆինանսապես օգնելու են քաղաքային խորհրդին: Իշխան Զաքարյանը գոհունակությամբ նշեց, որ անցած տասն ամիսների ընթացքում կատարվել է լուրջ աշխատանք եւ այլեւս կասկածից վեր է, որ ԱՄՆ եւս մեկ քաղաքի մարզիկներ կմասնակցեն ամառային խաղերին: Հանդիպման ընթացքում ՀԽՀԿ նախագահը վկայականներ հանձնեց Լաս Վեգասի քաղաքային խորհրդի առաջին քսան անդամներին:

Հաջորդ օրերի բավականին լուրջ եւ շահագրգիռ քննարկումների առանցքում նաեւ Համահայկական մարզական Վիլիջի շինարարության հետ կապված հարցն էր: Նախատեսվող «համերգ-հանգանակություն» միջոցառման շրջանակներում Իշխան Զաքարյանը, Ալբերտ Բոյաջյանը (ԱՄՆ) եւ Վրեժ Շառոյանը (Սիրիա) հանդիպեցին հայկական շոու բիզնեսի ներկայացուցիչների, սիրված երգիչների հետ:

ՀԽՀԿ պատվիրակությունն առաջիկա օրերին եւս մի շարք կարեւոր հանդիպումներ կունենա ու դեկտեմբերի 7-ին կավարտի աշխատանքային այցն ԱՄՆ:

ԿԱԴՐԱՅԻՆ ՋԱՐԴԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

«Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 3.1-ին մասով եւ 9-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Պրոբացիայի ծառայության պետի ժամանակավոր պաշտոնակատար Արամ Նիկոյանին ազատել զբաղեցրած պաշտոնից»,- նշված է վարչապետի որոշման մեջ:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ, Արսեն Մնացականյանն ազատվել է Գլխավոր հարկադիր կատարողի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնից:

«Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 3.1-ին մասով եւ 9-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Գլխավոր հարկադիր կատարողի ժամանակավոր պաշտոնակատար Արսեն Մնացականյանին ազատել զբաղեցրած պաշտոնից»,- ասված է որոշման մեջ:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր. «Արդարադատության նորանշանակ նախարար Սրբուհի Գալյանը կամաց-կամաց ազատվում է իր տեղակալներից: Նոյեմբերի 5-ին, երբ Գալյանը նշանակվեց Նախարար, մոտ երկու շաբաթ անց՝ նոյեմբերի 22-ին, պաշտոնից ազատեց նախարարի տեղակալ Արմենուհի Հարությունյանին, օրեր անց նախարարի տեղակալ Կարեն Կարապետյանը եւս լքեց պաշտոնը:

«Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրները փոխանցում են, որ դա դեռ սկիզբն է: Գալյանը կադրային ջարդը սկսել է իր տեղակալներից ու շարքը շարունակական է լինելու՝ իջնելով ներքեւ»:

ԻՐԱՎԱԿԱՆ

1-3 ՏԱՐԻ ԱԶԱՏԱԶՐԿՈՒՄ՝ ՊԵՏԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆԸ ԼՌՈՒՄ Է, ԱՂԱԶԱՐՅԱՆԸ՝ ՍՊԱՍՈՒՄ

Դեկտեմբերի 3-ին տեղի է ունեցել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Վարչության նիստ, որը վարել է Վարչության նախագահ, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Վարչության որոշմամբ՝ Հովիկ Աղազարյանը հեռացվել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունից՝ պետական եւ կուսակցական նշանակության կոնֆիդենցիալ տեղեկության արտահոսքերի, ինչպես նաեւ հանրության բարոյական նորմերի կոպիտ խախտումների համար:

Քննարկվել են նաեւ այլ հարցեր:

Ասել է թե՝ Աղազարյանին մեղադրում են պետական գաղտնիքի արտահոսքի մեջ: Գլխավոր դատախազությունում ՔՊ-ի հայտարարությունից մինչ օրս քննարկում են՝ քրեական վարույթ նախաձեռնել, թե ոչ, ու մինչ Գլխավոր դատախազությունը լռում է կամ սպասում է հրահանգի՝ «հարուցել, թե ոչ», տեսնենք, թե ինչ է նախատեսում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հոդված 427-ը՝ պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ հրապարակելը.

1. Պետական գաղտնիք պարունակող տեղեկություն հրապարակելն այն անձի կողմից, որը դրա հետ ծանոթանալու իրավունք ուներ, եթե բացակայում են սույն օրենսգրքի 418-րդ հոդվածով նախատեսված հանցանքի հատկանիշները՝

պատժվում է ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս կամ այլ ծանր հետեւանք՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

Ավելի վաղ Նիկոլ Փաշինյանը «Հայաստան» խմբակցության պատգամավոր Ագնեսա Խամոյանի հարցին ի պատասխան ներկայացրել է, թե ինչպե՞ս է Հովիկ Աղազարյանի հեռախոսի պարունակությունը հայտնվել իր մոտ:

Նրա խոսքով՝ Աղազարյանի հեռախոսն առգրավվել է անկախ մարմնի կողմից, որն էլ օրենքով սահմանված կարգով, ընթացակարգերն ու թույլտվություններն ունենալով, քննչական հանձնարարական է տվել մեկ այլ մարմնի. «Երբ այդ մարմինը, հանձնարարականը կատարելու ընթացքում, բախվել, հանդիպել է տեղեկությունների, որոնք պարունակում են պետական անտվանգության սպառնալիքներ, այդ թվում՝ հակահետախուզական սպառնալիքներ, բնականաբար, այդ պարագայում այդ մարմինը պարտավոր էր իր գործառույթների շրջանակում կատարել աշխատանք, այդ թվում՝ հեռախոսի տիրոջ հետ, եւ պարտավոր էր զեկուցել իր վերադասին, տվյալ դեպքում՝ ՀՀ վարչապետին»:

Ըստ Փաշինյանի, երբ ՀՀ վարչապետի սեղանին նման տեղեկություններ են հայտնվում, նա տեղեկություններով կիսվել է օրենքով նման իրավասություն ունեցող անձանց հետ:

«Ժողովրդավարության բաստիոնը պետք է գտնի լծակներ՝ քաղաքական, բարոյական եւ այլ, նման կարմիր գծեր հատած պատգամավորին ժողովրդի կողմից մանդատից զրկելու համար: Ոչ մի պահ չկասկածեք՝ բոլոր օրինական միջոցները կգործադրվեն այդ նպատակին հասնելու համար»,- նշել էր Փաշինյանը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԲԱՆՏՈՒՄ ԱՐԱԲ ԿԱԼԱՆԱՎՈՐԸ ՓՈՐՁԵԼ Է ՎԵՐՔ ՏԱԼ ԿՅԱՆՔԻՆ

«Արթիկի» քրեակատարողական հիմնարկում 2004 թվականին ծնված ազգությամբ արաբ կալանավոր Ա. Մ.-ն ինքնասպանության փորձ է արել: Վերջինիս գործողությունները կանխվել են:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ արաբ կալանավորը հայտնել է, որ բանտի պայմանների հետ չի կարող հաշտվել:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ արաբ կալանավորը բանտարկվել է այս տարի՝ հոկտեմբերի 28-ին, ՀՀ քրեական օրենսգրքի 469 հոդվածով, այն է՝ պետական սահմանը ապօրինի հատելը:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՆՈՐ ՍԿԱՆԴԱԼ Է ՀԱՍՈՒՆԱՆՈՒՄ

ՀՀ փաստաբանների պալատի փաստաբանների ակումբում ձեւավորված փաստաբանների նախաձեռնող խմբի փաստաբանների կողմից 2024 թվականի դեկտեմբերի 4-ին հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել Գլխավոր դատախազություն, որը վերաբերում է Ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանի կողմից կատարված կոռուպցիոն ռիսկեր պարունակող գործողություններին:

Փաստաբանները Գլխավոր դատախազին ներկայացրել են մի շարք հիմնավորումներ՝նշված փաստերով քրեական վարույթ նախաձեռնելու եւ դրանց պատշաճ քրեաիրավական գնահատական տալու խնդրանքով:

Հիշեցնենք, որ փաստաբանները մասնավորապես բարձրաձայնել էին ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանի հետեւյալ գործողությունների մասին՝

1. Վահե Հովհաննիսյանը 2021թ. հայտնել է, որ ստացել է 1.000.000 ԱՄՆ դոլար անտոկոս փոխառություն:

2. Վահե Հովհաննիսյանը 1.050.000 ԱՄՆ դոլար գնով գնել է «Կարիտաս Իտալիանա» ՓԲ ընկերության 100% բաժնետոմսերը, իսկ հետագայում այդ կազմակերպությունը վերակազմավորել է «Ջի Կոդեր» ՍՊ ընկերության, իր բաժնեմասերը վաճառել է ազգականին: 2023թ. այդ նույն «Ջի Կոդեր» ՍՊԸ-ին ՀՀ կառավարությունը տրամադրել է 1,8 մլրդ դրամի ապրանքների ներմուծման մաքսատուրքի արտոնություն, որի ազատված մաքսատուրքը կազմել է 118 մլն. դրամ: Հատկանշական է, որ 2023թ. դրությամբ Վահե Հովհաննիսյանը «Ջի Կոդեր» ՍՊԸ-ի նկատմամբ ունեցել է 52.614.000 ՀՀ դրամի փոխառության պահանջի իրավունք.

3. ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանն իրեն պատկանող հյուրատունը վարձակալության է տրամադրել «Վարդենի» ՍՊ ընկերությանը, որին առանց մրցույթի մեկ միլիոն դրամից ավելի գնով վճարվել է ֆինանսների նախարարության աշխատակիցների համար խաղ-վարժանքների կազմակերպման եւ անցկացման նպատակով: Ընդ որում, նշված ընկերությունը հիմնադրվել է 2019 թվականին հենց Վահե Հովհաննիսյանի կողմից, որը հետագայում փոխանցվել է իր ընկերոջը.

4. Երեք տարիների համար ներկայացված հայտարարագրում առկա են էական անհամապատասխանություններ: Մասնավորապես, 2023թ. հայտարարագրում նշել է, որ 2006թ. «Տոյոտա» մակնիշի տրանսպորտային միջոցը իբրեւ վաճառել է 25.000.000 ՀՀ դրամով:

Հ.Գ. Նախաձեռնող խմբի ներկայացուցիչ փաստաբան Արա Զոհրաբյանը նաեւ ՀՀ կառավարությանը հարցում է կատարել՝ ճշտելու համար՝ արդյոք «Ջի-Կոդեր» ՍՊԸ-ի հետ Վահե Հովհաննիսյանի շահագրգռվածության վերաբերյալ տեղեկությունները հայտնի եղել են ՀՀ կառավարության 09.11.2023թ. N 1942-Ա որոշման ընդունման ժամանակ, թե ոչ:

ԴԱՏԱԿԱՆ

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ ՍՏԱՑԵ՞Լ ԵՆ ՔՊ-ԻՑ



Երեկ ՀՀ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը, քարտուղար Արթուր Հովհաննիսյանը, նաեւ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը հայտարարեցին, որ ԱԺ պատգամավոր Հովիկ Աղազարյանը պետական գաղտնիք պարունակող ինֆորմացիայի արտահոսք է արել:

«Ժողովուրդ» օրաթերթը այս հարցով դիմեց ՀՀ գլխավոր դատախազություն՝ պարզելու՝ ստացե՞լ է արդյոք ՀՀ գլխավոր դատախազը Աղազարյանի ենթադրյալ հանցանքի վերաբերյալ դիմում ՔՊ-ի կողմից, եւ արդյոք ՀՀ գլխավոր դատախազը հանրային հայտարարությունների հիման վրա հարուցել է քրեական վարույթ՝ ենթադրյալ պետական գաղտնիքի արտահոսքի առիթով:

«Ժողովուրդ» օրաթերթին ՀՀ գլխավոր դատախազությունից ասացին, որ հարցերին կպատասխանեն գրավոր, որոնք ստանալու դեպքում «Ժողովուրդ» օրաթերթը այն կհրապարակի:

Այս ամենում հետաքրքիրն այն է, որ 3 պաշտոնյա հանրային կերպով խոսում են ենթադրյալ հանցագործության՝ պետական գաղտնիքի արտահոսքի մասին, որն իրագործել է ԱԺ պատգամավորը, սակայն հարկ է արձանագրել, որ այս մասին որեւէ պաշտոնյա հաղորդում չի ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազություն:

ԱՊՕՐԻՆԻ ՊԱՀՎՈՂ ՀՐԱՑԱՆ ԵՎ ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐ

Համայնքային ոստիկանության Վարդենիսի բաժնի ծառայողները օպերատիվ տեղեկություն էին ստացել, որ Արմավիրի մարզի Արեւշատ գյուղում բնակվող 48-ամյա տղամարդը Վարդենիսում գտնվող հայրական տանը ապօրինի զենք-զինամթերք է պահում:

Նախաձեռնվել է քրեական վարույթ, որի շրջանակում նշված հասցեում կատարված զննության ընթացքում 48-ամյա տղամարդը անասնագոմից իրավապահներին է ներկայացրել 16 մմ տրամաչափի մեկփողանի որսորդական հրացան եւ ինքնաձիգի 7,62 մմ տրամաչափի 22 փամփուշտ:

Կազմված փաստաթղթերն ուղարկվել են Վարդենիսի քննչական բաժին:

Ծանուցում. Ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ դեկտեմբերի 4-ից 5-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 106 դեպք, որից 5-ը՝ նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

ՄՐՑՈՒՅԹ՝ ԿՈՎԵՐԻՆ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՍԵՐՄՆԱՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Տավուշի մարզպետարանը հայտնում է, որ Կառավարության 2024 թվականի օգոստոսի 22-ի N 1392-L որոշմամբ հաստատված՝ «Մթերատվության բարձրացման փորձնական ծրագրի» շրջանակներում նախատեսվում է պետական աջակցություն ցուցաբերել կովերի արհեստական սերմնավորման գործընթացին՝ յուրաքանչյուր սերմնավորման համար փոխհատուցելով 10 հազար դրամ (5 հազար դրամը կվճարի անասնատերը): Ծրագրի համաձայն՝ Տավուշի մարզում նախատեսվում է 2025 թվականին սերմնավորել 1410 գլուխ կով: Ըստ Տավուշի մարզպետարանի հայտարարության՝ այդ ծրագրին մասնակցելու հայտեր կարող են ներկայացնել այն կազմակերպությունները, որոնք ունե. ա/ տվյալ ոլորտում գործունեություն իրականացնելու առնվազն մեկ տարվա փորձ եւ համապատասխան գործունեությամբ զբաղվելու հավաստագիր ունեցող մասնագետներ,

բ/ ունեն վարկային դրական պատմության վերաբերյալ զեկույց, որի համաձայն՝ ըստ ԱՔՐԱ տեղեկատվության համակարգի, դիմումի ներկայացման օրվան նախորդող 12 ամիսների ընթացքում չեն ունեցել գումարային 60 օր եւ ավելի ժամկետով ժամկետանց վարկային պարտավորություններ: Հայտերի ընդունման վերջնաժամկետն է սույն թվականի դեկտեմբերի 12-ը՝ ժամը 12:00-ն:

Տավուշի մարզի ցլերն ի՞նչ եղան, որ կովերին արհեստական եղանակով են սերմնավորելու: Կովերին արհեստական սերմնավորելը դժվար գործ է, եթե անասունների բեղմնավորման ժամանակաշրջանը չէ, կովերը սերմնավորող մասնագետին պոզերով խոցում են, ոտքերով հարվածում:

2025 թվականի վերջին պարզ կդառնա, թե այդ ծրագրով Տավուշում քանի կով է արհեստական սերմնավորվել:

ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ 3 ՄԱՍԻ Է ՊԱՌԱԿՏՎԵԼ

Իջեւան համայնքի սահմանամերձ Կիրանց գյուղի բնակիչները, իրենց անունը չհրապարակելու պայմանով, հայտնեցին, որ սահմանազատման անվան տակ միակողմանի, անօրինական կերպով Կիրանցի հողերը Ադրբեջանին հանձնելուց հետո գյուղի բնակչությունը պառակտվել է 3 մասի՝ հանձնված հողերի դիմաց պետական բյուջեից փոխհատուցում ստացածներ, փոխհատուցում չստացածներ, զոհված հերոսների հարազատներ եւ չեզոքներ: Պետական բյուջեից փոխհատուցում ստացածները, Նիկոլ Փաշինյանի կողմնակիցները եւ Կիրանցի հողերի հանձնումը դատապարտողներն այնքան անհաշտ հարաբերությունների մեջ են, որ միասին միջոցառումների չեն մասնակցում, կամ մասնակցելու դեպքում արագ հեռանում են: 400-ից էլ քիչ բնակիչ ունեցող, հերոսական տարագրություն ունեցող Կիրանցում անառողջ մթնոլորտ է ստեղծվել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՆԾՈՒԽ ԵՐԿԻՐ

ՇՎԵԴԻԱՆ ՀԱՍԵԼ Է ԱՌԱՆՑ ՍԻԳԱՐԵՏԻ ԾԽԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ

2024 թվականի նոյեմբերի 13-ին Շվեդիան պաշտոնապես դարձավ անծուխ երկիր:

Շվեդիայի հանրային առողջության գործակալության կողմից հրապարակված առողջապահական տվյալները ցույց են տալիս, որ Շվեդիայում ծնված մեծահասակների ընդամենը 4,5 տոկոսն է ծխում, ինչը ցածր է միջազգայնորեն ընդունված 5 տոկոսից՝ եւ դա հնարավորություն տվեց Շվեդիային ստանալ առանց սիգարետի ծխի երկրի կարգավիճակ:

Եվրոպայում ծխելու միջին մակարդակը 24 տոկոս է, ինչը հինգ անգամ գերազանցում է Շվեդիայում գրանցված արդյունքին: Ծխելու վնասի նվազեցման ակտիվիստներն ասում են, որ շվեդների հաջողությունը ծխելուն ավելի անվտանգ այլընտրանքների նկատմամբ նրանց քաղաքականության նորարարական մոտեցման արդյունքն է:

«Այս ուշագրավ ձեռքբերումը կարեւոր պահ է գլոբալ առողջապահության համար եւ վկայում է այն առաջադեմ քաղաքականության մասին, որն առաջնորդել է ծխելու դեմ պայքարի Շվեդիայի մոտեցումը», - ասվում է է Smoke Free Sweden-ի ղեկավար Դելոն Հումանի հայտարարության մեջ:

1960-ականների սկզբին շվեդ տղամարդկանց գրեթե կեսը ծխում էր: Ընդունելով եւ խրախուսելով այլընտրանքային նիկոտինային արտադրանքների օգտագործումը՝ ինչպիսիք են սնուսը, նիկոտինային բարձիկները եւ անծուխ այլընտրանքները, Շվեդիան հստակ ճանապարհ է սահմանել դեպի սիգարետի ծխից զերծ հասարակություն՝ միաժամանակ պաշտպանելով հանրային առողջությունը:

«Նրանք պետք է ծառայեն որպես հույսի փարոս մնացած երկրների համար եւ ոգեշնչող ապացույց, որ պրագմատիկ, լուսավոր մոտեցումը կարող է ապահովել սենսացիոն առողջապահական ձեռքբերումներ եւ կյանքեր փրկել», - հավելել է Դելոն Հումանը:

Նոր վիճակագրությունը ցույց է տալիս, որ ներկայումս ծխում է Շվեդիայի մեծահասակների, ներառյալ ներգաղթյալների 5,3 տոկոսը: Հատկանշական է, որ տվյալները ցույց են տալիս նաեւ, որ Եվրոպայի այլ վայրերում ծնված մարդիկ երեք անգամ ավելի հաճախ կծխեին, եթե չտեղափոխվեին Շվեդիա: «Շվեդիայի հաջողության բանալին նրա պրագմատիկ ուշադրությունն է վնասի նվազեցման, այլ ոչ թե արգելման վրա», - ասում է բժիշկ եւ Շվեդիայի բժշկական ասոցիացիայի նախկին նախագահ եւ գործադիր տնօրեն Անդերս Միլթոնը:

Անվտանգ նիկոտինային ապրանքների լայն տեսականի՝ մի շարք ուժեղ եւ համային հատկանիշներով, օրինականորեն հասանելի են ինչպես առցանց, այնպես էլ խանութներում, եւ գովազդն աջակցում է դրանց բարձրացնելով իրազեկությունը եւ խթանելով սպառումը:

Շվեդիայի կառավարությունը նաեւ կիրառում է համամասնական ակցիզային հարկ՝ անծուխ արտադրանքն ավելի մատչելի դարձնելով, քան սիգարետը: Այս հարկային քաղաքականությունը, զուգորդված հանրային կրթական արշավների հետ, շվեդ սպառողներին հնարավորություն են տվել ավելի առողջ ընտրություն կատարել եւ նպաստել երկրի առաջատար դերին ծխախոտի վնասը նվազեցնելու գործում:

Իր ռազմավարության արդյունքում Շվեդիան ունի ծխախոտի հետ կապված հիվանդությունների ամենացածր ցուցանիշը ԵՄ-ում եւ 41 տոկոսով ցածր քաղցկեղով հիվանդությունների մակարդակ, քան մյուս եվրոպական երկրները. «Մինչ Շվեդիան նշում է այս պատմական նվաճումը, մյուս երկրների մեծ մասը դեռ հեռու է ծխելը դադարեցնելու իրենց նպատակներին հասնելուց», - ասել է Հումանը:

Նրանց կոշտ, արգելափակող քաղաքականությունը սահմանափակում է նիկոտինի ավելի քիչ վտանգավոր այլընտրանքների հասանելիությունը, ներառյալ բերանի միջոցով օգտագործվող նիկոտինային արտադրանքները եւ էլեկտրոնային սիգարետները: Այս ռեգրեսիվ քաղաքականությունը ծխողներին հեռացնում է պոտենցիալ կյանք փրկող գործիքներից եւ խոչընդոտում է ծխախոտի վնասը նվազեցնելու առաջընթացին:

Աղբյուրը՝ tobaccoreporter.com

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ»

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՀԵՏ

«Արդշինբանկ»-ը տեխնիկական աջակցման ռազմավարական համագործակցություն է սկսել Եվրոպական ներդրումային բանկի հետ՝ «Կանաչ ֆինանսական համակարգ» (Greening Financial Systems) ծրագրի շրջանակներում:

Համագործակցության նպատակն է բարելավել բանկի՝ կլիմայական ռիսկերի կառավարման մեթոդները, ապահովել կայուն զարգացման նպատակների իրականացումը եւ աջակցել Կլիմայի անցումային ծրագրի իրականացմանը: Ծրագրի համաձայն՝ բանկն իրականացնելու է մի շարք գործողություններ, որոնք օգնելու են կլիմայի կառավարման համաշխարհային նպատակներին համապատասխանելուն եւ կանաչ ֆինանսավորումը խթանելուն: Այս նախաձեռնությունը կօգնի նաեւ ավելի արդյունավետ գնահատել կլիմայական ռիսկերը, չափել դրանց ազդեցությունը եւ համապատասխանել միջազգային չափանիշներին:

Կիրառելով նման առաջադեմ մեթոդաբանություն՝ «Արդշինբանկ»-ը նպատակ ունի ոչ միայն ընդլայնել իր ներքին հնարավորությունները, այլեւ ներգրավել իր հաճախորդներին եւ գործընկերներին կայուն զարգացման ուղղությամբ ներդրումներ կատարելու գործընթացում:

Մենք ուժեղ ենք միասին, եւ այսպիսի համագործակցությունների ու ընդհանուր տեսլականի միջոցով միտված ենք ձեւաորելու ֆինանսական էկոհամակարգ, որն առաջնահերթություն է տալիս կայուն զարգացմանը, պատասխանատվությանը եւ երկարաժամկետ աճին:

«Կանաչ ֆինանսական համակարգ» ծրագիրը ֆինանսավորվում է Կլիմայի միջազգային նախաձեռնության հիմնադրամի (International Climate Initiative Fund) կողմից՝ Գերմանիայի տնտեսական հարցերի եւ կլիմայական գործողությունների դաշնային նախարարության պատվերով: Այն Եվրոպական ներդրումային բանկի եւ Գերմանիայի տնտեսական հարցերի եւ կլիմայական գործողությունների դաշնային նախարարության համատեղ ներդրումն է «Կանաչ կենտրոնական բանկերի պատրաստակամության աջակցություն» (Readiness Support for Greening Central Banks) նախաձեռնության մեջ, որն էլ իր հերթին հանդիսանում է Ազգային մակարդակով սահմանված ներդրումների գործընկերության (NDC Partnership) նախաձեռնությունը:

● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 14 պատահար. 16 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ -ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ՝ հոլանդական եղանակով:

Աճուրդի ընթացքում վաճառվելու է «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտը՝

- ք. Երեւան, Շենգավիթ, Ե. Թադեւոսյան փողոց, 10 շենք, 85 հասցեում գտնվող 47 քմ նկուղային տարածք: Լոտի մեկնարկային գինը՝ 13700000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ հոլանդական եղանակով, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 23.12.2024թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ հոլանդական եղանակով կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 30.12.2025թ.:

Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն:

Նախավճարը վճարվում է «Բի էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթը եւ աճուրդի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին, լոտերի ամբողջական ցանկին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին եւ Բորսային՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am , www.borsa.am կայքեր:

Yandex Armenia

ԱՎԱՐՏՎԵՑ «ԱՌԱՏԱՁԵՌՆ ՆՈՅԵՄԲԵՐ» ԱԿՑԻԱՆ

Դեկտեմբերի 3-ին՝ «Առատաձեռն երեքշաբթի», միլիոնավոր մարդիկ ամբողջ աշխարհում պատմում են բարեգործությանը իրենց մասնակցության եւ այն կազմակերպությունների մասին, որոնց վստահում եւ օգնում են: Այդ օրն ավարտվում է «Առատաձեռն նոյեմբեր» բարեգործական ակցիան, որը նախաձեռնել է Yandex Armenia-ն՝ երկրում բարեգործությանն աջակցելու նպատակով:



Ամբողջ նոյեմբեր Yandex Go-ի ծառայությունների օգտատերերը կարող էին միանալ «Առատաձեռն նոյեմբեր» բարի նախաձեռնությանը: Բավական էր ուրբաթ օրերին տաքսի, առաքում կամ սնունդ պատվիրել: Տաքսիների եւ առաքման բոլոր սակագներում յուրաքանչյուր 10 կմ-ի համար ընկերությունը բարեգործությանը փոխանցել է 5 դրամ: Իսկ սննդի յուրաքանչյուր ուրբաթօրյա պատվերի համար՝ սկսած 3000 դրամից, ընդհանուր գումարին ավելացրել է եւս 30 դրամ: Yandex Armenia-ն ավելացրել է ակցիայի հինգ օրերի ընթացքում ստացված գումարը: Ակցիայի արդյունքներով՝ «Հայաստանի մանուկներ» (ՔՈԱՖ), «Հայաստանի երեխաների առողջության հիմնադրամ», «ԿՅԱՆՔԻ ՃԱՆԱՊԱՐՀ» բարեգործական կազմակերպություններին կփոխանցվի 4 570 000 դրամ:

«Մեր առաջնային նպատակը յուրաքանչյուր երեխային անհրաժեշտ բժշկական օգնությամբ ապահովելն է: Մենք երախտապարտ ենք Yandex Go-ին մեր առաքելությանը հավատալու համար եւ բոլոր նրանց, որոնք աջակցել են մեր հիմնադրամին, հետեւաբար՝ նաեւ օգնել Հայաստանի երեխաներին, - ասել է «Հայաստանի երեխաների առողջության հիմնադրամ»-ի հիմնադիր տնօրեն Արմեն Մարտիրոսյանը, - Ձեր առատաձեռնությունը թույլ է տալիս մեզ իրականացնել կենսական անհրաժեշտության բուժումներ երեխաների համար: Նման արշավներն ընդգծում են հավաքական ջանքերի փոխակերպող ուժը»:

Yandex Armenia-ի նախաձեռնած «Առատաձեռն նոյեմբեր» ակցիան երկրում անցկացվեց երկրորդ անգամ: Սա երկրում բարեգործության աջակցության նախագծերից մեկն է միայն: Օրինակ՝ Yandex Go-ն օգնում է նաեւ կազմակերպել անվճար ուղեւորություններ եւ առաքումներ Հայաստանի մի քանի բարեգործական կազմակերպությունների շահառուների համար: Այսպիսով՝ ծրագրի մեկնարկից սկսած՝ օգնություն է ստացել 150 մարդ. կատարվել է ավելի քան 4000 ուղեւորություն եւ առաքում:

2024 թ. բարեգործական կազմակերպությունների, ակցիայի մասնակիցների մասին տեղեկատվություն

● «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ) շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություն է՝ուղղված Հայաստանի գյուղաբնակ երեխաների կյանքի փոխակերպմանը կրթության, առողջապահության, սոցիալական աշխատանքի եւ տնտեսական զարգացման համապարփակ ծրագրերի միջոցով: ՔՈԱՖ-ը կենսական նշանակության մի շարք ծառայությունների հասանելիություն է ապահովում իր նորարար ծրագրերի միջոցով, որոնց հիմքում արդյունավետ ուսումնառության, բարեկեցության եւ ստեղծարարության խթանումն է: Հիմնադրամը նաեւ աջակցում է երիտասարդների մտահորիզոնի ընդլայնմանը՝ այդպիսով ոգեշնչելով նրանց կերտել ավելի փայլուն ապագա:

● «ԿՅԱՆՔԻ ՃԱՆԱՊԱՐՀ» - Հայաստանում միակ հիմնադրամն է, որն ամբողջությամբ նվիրված է էպիլեպսիա եւ այլ բարդ նյարդաբանական հիվանդություններ ունեցող երեխաների աջակցությանը: Հիմնադրամը երեխաներին ապահովում է անհրաժեշտ դեղորայքով, կազմակերպում է ախտորոշիչ եւ գենետիկ հետազոտություններ: Հիմնադրամը բուժման հասանելիությունը բարելավելու նպատակով ակտիվորեն համագործակցում է բժիշկների ու առողջապահության նախարարության հետ եւ բարեգործական միջոցառումներ, մազմատեսակ ակցիաներ է անցկացնում՝ ուշադրություն հրավիրելով մանկական էպիլեպսիայի եւ այլ նյարդաբանական հիվանդությունների խնդրի վրա:

● «Հայաստանի երեխաների առողջության հիմնադրամ» - բարեգործական կազմակերպություն, որն աջակցում է առողջական ծանր խնդիրներ ունեցողերեխաներին՝ ապահովելով բուժման հասանելիություն ինչպես Հայաստանում, այնպես էլ միջազգային առաջատար կլինիկաներում: Հիմնադրամը ժամանակակից բժշկական սարքավորումներով է զինում հիվանդանոցները եւ նպաստում բժիշկների մասնագիտական առաջընթացին, որպեսզի նրանք կարողանան ապահովել օգնության ամենաբարձր մակարդակ: Կազմակերպությունն իրականացնում է նաեւ հիվանդությունների կանխարգելման եւ վաղ հայտնաբերման ծրագրեր՝ նվազեցնելով մանկական մահացությունը եւ բարելավելով երեխաների կյանքի որակը:

ԳՈՎԱԶԴ

«ՖԱՍԹ» ԲԱՆԿ

«Ֆասթ» բանկը վերաբրենդավորել է Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի Գարեգին Նժդեհ 4/1 հասցեում գտնվող մասնաճյուղը: Կարեւորելով հաճախորդների հարմարավետության առաջնահերթությունը՝ Մարտունի քաղաքում բանկը եւս շարունակելու է աշխատել 24/7 գրաֆիկով:

«Ֆասթ» բանկի «Մարտունի» մասնաճյուղի կառավարիչ Միեր Միերյանը նշել է, որ բանկը հաճախորդներին ներկայանալու է տեխնիկապես վերազինված սրահով. «Ուրախ ենք, որ «Ֆասթ» բանկը Մարտունի քաղաքում ներկայանում է նոր վերաբրենդավորված մասնաճյուղով, որտեղ բոլոր հնարավորություններն առկա են հաճախորդների բարձրորակ սպասարկումը եւ ֆինանսական գործառնությունների կատարման փորձառնությունն էլ ավելի բարձր մակարդակով ներկայացնելու համար», - ասել է նա:

«Ֆասթ» բանկն առաջնորդվում է հաճախորդների սպասարկումը ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցնելու սկզբունքով: Բանկը վերջին ամիսներին ակտիվորեն իրականացնում է ինչպես մայրաքաղաքի, այնպես էլ մարզային մասնաճյուղերի վերաբրենդավորման աշխատանքներ՝ նպատակ ունենալով բոլոր մասնաճյուղերում ապահովել հարմարավետ, բարձր որակի սպասարկում՝ հընթացս նաեւ մեծացնելով ծառայությունների շրջանակը:

«Ֆասթ» բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը 24/7 աշխատանքային գրաֆիկով ներկայացված է Հայաստանի բոլոր մարզերում, գործում է նաեւ բանկի հավելվածը: «Ֆասթ» բրենդն այս տարի տոնել է ստեղծման 30-ամյակը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԱՐՇԻՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն մտադիր է դիմել հանրային ծառայությունը կարգավորող հանձնաժողով՝ ընկերությանը պատկանող «ՕՇ ԷՆԵՐԳՈ» ՓՀԷԿ-ից Արագածոտնի մարզ Աշտարակ համայնքի Օշական բնակավայր առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման հայտով: Առաջարկվող սակագինը՝ 15.648 դրամ/կվտժ (առանց ԱԱՀ);

Հեռ. (+374 77)767 474:

Հասցե՝ Արագածոտնի մարզ, հ. Աշտարակ, բնակավայր Օշական:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՈՒՈԼԹ ԴԻՍՆԵՅ

ՄՈՒԼՏԻՊԼԻԿԱՑԻԱՅԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Շատերը չգիտեն նրան, բայց գիտեն նրա Միկի եւ Մինի մաուսներին, Դոնալդ բադիկին, Ցյունանուշիկին եւ յոթ թզուկներին:



Խոսքը կինոռեժիսոր, մուլտիպլիկատոր Ուոլթ Դիսնեյի մասին է:

Դեկտեմբերի 5-ին Դիսնեյի ծննդյան օրն էր:

«Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է կինոռեժիսորի կյանքից հետաքրքիր պատմություններ, դեպքեր:

Միկի անունով Մկնիկը. ինչպե՞ս այն հեղաշրջեց Դիսնեյի կյանքը: Ինչպես նշեցինք, Դիսնեյին չճանաչելու դեպքում անգամ հաստատ ճանաչում են նրա Միկի մաուսին՝ մկնիկ Միկիին: Չնայած նրան, որ Մկնիկ Միկին բավականին սիրված եւ ճանաչված մուլտհերոս է, նրա կերպարն այնքան էլ հեշտ ճանապարհով չի անցել: 1920-ականների վերջին Ուոլթ Դիսնեյը ֆինանսական դժվարությունների առաջ էր կանգնած: Նա կորցրեց իր առաջին ստացված կերպարին՝ հաջողակ ճագար Օսվալդին (Oswald the Lucky Rabbit), Universal Pictures-ի հետ պայմանագրային խնդիրների պատճառով: Այդ պահին նա իր եղբոր՝ Ռոյի, եւ ընկերոջ՝ Ուբ Այվերկսի հետ ստեղծեց նոր կերպար՝ Միկի Մաուսը: Միկիի առաջին անիմացիան՝ Steamboat Willie-ը (1928), դարձավ աննախադեպ հաջողություն եւ փոխեց Դիսնեյի կյանքը: Միկի Մաուսի նախնական անունը պետք է լիներ Mortimer Mouse, սակայն Ուոլթ Դիսնեյի կինը՝ Լիլիանը, կարծեց, որ դա հնչում է չափազանց լուրջ եւ անհարմար: Նա առաջարկեց Միկի անունը եւ Ուոլթը համաձայնեց:

Միկի Մաուսի առաջին պաշտոնական անիմացիան համարվում է Steamboat Willie-ը, որը թողարկվեց 1928 թվականի նոյեմբերի 18-ին: Այն առաջին սինխրոնացված ձայնով անիմացիոն ֆիլմերից մեկն էր, եւ այս տեխնոլոգիական նորամուծությունը մեծ ազդեցություն ունեցավ անիմացիայի ոլորտում: Այս ամսաթիվը նաեւ նշվում է որպես Միկի Մաուսի ծննդյան օր: Առաջին տարիներին Միկի Մաուսին ձայնային հնչյունավորում էր անում հենց Ուոլթ Դիսնեյը: Նա խոստովանել է, որ իրեն դուր էր գալիս կերպարի հետ կենդանի կապ ունենալը: Ավելի ուշ դերասաններ Ջիմի Մաքդոնալդը եւ Ուեյն Օլվայնը ստանձնեցին այդ դերը: Միկի Մաուսն առաջին անիմացիոն կերպարն էր, որն արժանացավ Օսկարի պատվավոր մրցանակի 1932 թվականին՝ «Ստեղծագործական ձեռքբերումների» համար: 1950-ականներին Միկի Մաուսի շուրջ ստեղծվեց հեռուստաշոու՝ The Mickey Mouse Club-ը, որը դարձավ շատ սերունդների սիրելի հաղորդումը, որի միջոցով Միկիի կերպարը ավելի լայն ճանաչում ձեռք բերեց: Միկի Մաուսը «Դիսնեյ» բրենդի հիմնական խորհրդանիշն է: Նա նաեւ սիմվոլ է եղել մշակութային մի շարք երեւույթների համար: Օրինակ՝ Սառը պատերազմի ընթացքում նրան նույնիսկ օգտագործում էին որպես ազատության եւ ամերիկյան մշակույթի խորհրդանիշ: Դիսնեյի բոլոր զբոսայգիներում կա «Թաքնված Միկի» (Hidden Mickey). Միկիի գլխի ու ականջների սիմվոլը պատահական տեղերում է թաքնված, եւ այցելուները կարող են դրանք որոնել: Միկի Մաուսի ազդեցությունը անգնահատելի է ամբողջ մշակույթի համար, եւ նա մինչ օրս շարունակում է մնալ սիրված կերպար ամբողջ աշխարհում:

Սպիտակաձյունիկն ու յոթ թզուկները

Սա Ուոլթ Դիսնեյի ստուդիայի առաջին լիամետրաժ ֆիլմն է: Ֆիլմի հիմքում գերմանական հեքիաթն է, որի հեղինակը Գրիմ եղբայրներն են: 1930-ականներին Դիսնեյը որոշեց նկարահանել «Սպիտակաձյունիկը եւ յոթ թզուկները»՝ պատմության առաջին լիամետրաժ անիմացիոն ֆիլմը: Շատերը նրան նախազգուշացնում էին, որ դա չափազանց ռիսկային էր եւ կարող էր տապալվել: Ի սկզբանե ֆիլմի բյուջեն նախատեսված է եղել 250.000 ԱՄՆ դոլար, որը հետագայում աճեց եւ հասավ 1.5 ԱՄՆ դոլարի: Այնուամենայնիվ, Ուոլթը իր տունը գրավ դրեց եւ գրավադրման գումարը վերցրեց, գումարեց բոլոր հնարավոր ռեսուրսները եւ 1937-ին թողարկեց ֆիլմը, որը հսկայական հաջողություն ունեցավ եւ դարձավ ժամանակի ամենաբարձր եկամտաբեր ֆիլմերից մեկը:

Շատ քննադատներ մտածում էին, որ մարդիկ կհոգնեն 90 րոպե մուլտֆիլմ դիտելուց: Ֆիլմում օգտագործվեց նոր Multiplane Camera տեխնոլոգիան, որը հնարավորություն տվեց պատկերել խորություն եւ տարածականություն: Այդ տեխնիկան թույլ տվեց ստեղծել վիզուալ ավելի իրատեսական միջավայրեր:

Դիսնեյը փոխեց ավանդական թզուկների դերը՝ յուրաքանչյուրին տալով եզակի անուններ եւ անհատականություններ, որոնք հիշվում են մինչ օրս.

- Դոքի (Doc)՝ խմբի առաջնորդը
- Գռամփի (Grumpy)՝ դժգոհ ու խիստ
- Հեփի (Happy)՝ միշտ ուրախ
- Սլիփի (Sleepy)՝ քնկոտ
- Բեշֆուլ (Bashful)՝ ամաչկոտ
- Սնիզի (Sneezy)՝ անընդհատ փռշտացող
- Դուփի (Dopey)՝ ամենաամեղ ու զվարճալի թզուկը:

Թզուկների կերպարների խորությունը եւ հումորը ֆիլմի հաջողության բանալիներից էին:

1939 թվականին Ուոլթ Դիսնեյը ստացավ հատուկ Օսկար՝ մեկ մեծ եւ յոթ փոքր արձանիկների ձեւով՝ ֆիլմի նորարարական եւ պատմական նշանակության համար:

Սպիտակաձյունիկի ձայնի դերակատարն էր Էդրիանա Կասելոտիին, ով այդ ժամանակ ընդամենը 19 տարեկան էր: Ուոլթ Դիսնեյը դիտավորյալ արգելեց Կասելոտիին մասնակցել այլ նախագծերի, որպեսզի նրա ձայնը մշտապես ասոցացվեր Սպիտակաձյունիկի հետ: Թզուկների երգը՝ Heigh-Ho-ն, դարձավ սիրված հիթ եւ մինչ օրս կապվում է «Դիսնեյ» բրենդի հետ:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

«ՆՈԱ»-Ի 4-ՐԴ ՀԱՂԹԱՆԱԿՆ ԱՆԸՆԴՄԵՋ

Հայաստանի ֆուտբոլի առաջնության 10-րդ տուրից հետաձգված «Նոա»-«Արարատ-Արմենիա» հանդիպումն ավարտվեց Հայաստանի փոխչեմպիոնի հաղթանակով:

Երեւանի Վազգեն Սարգսյանի անվան «Հանրապետական» մարզադաշտում կայացած խաղը ձգվեց մոտ 100 րոպե: «Նոա»-ին հաջողվեց առավելության հասնել 2:1 հաշվով: «Արարատ-Արմենիա»-ից աչքի ընկավ Տենտոն Յենեն, իսկ «Նոա»-ի համար գոլերը խփեցին Իմրան Օուլադ Օմարը եւ ինքնագոլի հեղինակ դարձավ Խունիոր Խուլիոն:

Այս տուրից հետո 35 միավորով «Արարատ-Արմենիա»-ն երկրորդն է, «Նոա»-ն, որ մի քանի հանդիպում քիչ է անցկացրել, 34 միավորով երրորդն է:

ՄՐՑԱՇԱՐԻ ԱՌԱՔԱՏԱՐՆԵՐԻՑ

Շախմատիստ Արամ Հակոբյանը Saint Louis Masters մրցաշարի առաջատարների շարքում է:

Ամերիկյան Սենթ-Լուիս քաղաքում ընթացող համանուն մրցաշարում կայացան մեկնարկային երկու տուրերը: Հայաստանն այս մրցաշարում ունի երեք ներկայացուցիչ:

Saint Louis Masters շախմատային մրցաշարն անցկացվում է շվեյցարական մրցակարգով եւ բաղկացած է 9 տուրից:

ՀԱՅԱՍՏԱՆԻՑ 4 ՇԱԽՄԱՏԻՍՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐԻ ԵՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ

Դեկտեմբերի 3-12-ը Կատարի մայրաքաղաք Դոհայում անցկացվում է «Qatar Masters Open 2024» շախմատի միջազգային մրցաշարը:

Այս մասին հայտնում է Հայաստանի շախմատային ֆեդերացիայի մամուլի քարտուղարությունը:

Հայաստանից մրցաշարին մասնակցում են գրոսմայստերներ Հայկ Մարտիրոսյանը, Շանթ Սարգսյանը, Մանուել Պետրոսյանը եւ Տիգրան Հարությունյանը:

ՀԱՂՊԱՏ

ՎԵՐԱԿԱՆԳՆՎԵԼ Է ՊԱՐՍՊԻ ՓԼՈՒՔՎԱԾ ԱՇՏԱՐԱԿԸ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության պատվերով իրականացվող Լոռու մարզի Ալավերդի համայնքի Հաղպատ վանական համալիրի արեւմտյան պարսպատի եւ աշտարակների նորոգման, ամրակայման եւ վերականգնման աշխատանքները ավարտվել են: Այս մասին հայտնում են ԿԳՄՄՆ-ից:

Կատարվել են հետեւյալ աշխատանքները՝ վերականգնվել է երկրաշարժից փլուզված աշտարակը, արտաքինից բացվել են պատերի եւ աշտարակների հիմնամասերը, մաքրվել ջրաշիթով եւ մինչեւ սալվածքի նիշն ամրակայվել միաձույլ բարդ շաղախից մակադրումով:

Պատերի շարակարանները մաքրվել են բուսաճից, քայքայված դարզասվաղից եւ միջալիցքից, վերականգնվել են: Պատերի որոշ հատվածներ լրաշարվել են նմանատիպ որմածքով, պատերի վրա տեղադրվել է բազալտե անկանոն թերթաքարերով պաշտպանիչ ծածկաշերտ՝ ապահովելով ջրերի ուղղորդված հեռացումը եւ այլն: Միեւնույն ժամանակ, հաշվի առնելով Հաղպատի վանական համալիրի որոշ կառույցների, դրանց ծածկասալերի խիստ քայքայված վիճակը՝ նախարարությունը 2025 թվականի համար առաջիկայում կհայտարարի վանական համալիրի կառույցների նորոգման, ամրակայման եւ վերականգնման գիտանախագծային փաստաթղթերի կազմման մրցույթ, որին կարող են մասնակցել բարձրագույն «Գ» (երրորդ) դասի արտոնագիր ունեցող ճարտարապետները:

● *Դեկտեմբերի 11-ին՝ ժամը 19:00-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում կցուցադրվի «Ինչ տարբերություն, թե ում հետ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000-8.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՅՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԱՐՑ. Ի՞նչ ընթացակարգով է կատարվում կոլեկտիվ աշխատանքային վեճի քննարկումը հաշտեցման հանձնաժողովի կողմից:

Մարգարիտա Լալայան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հաշտեցման հանձնաժողովը ստեղծվելուց հետո՝ յոթ օրվա ընթացքում, պետք է քննարկի կոլեկտիվ աշխատանքային վեճը: Նշված ժամկետը կարող է երկարաձգվել կողմերի համաձայնությամբ: Հաշտեցման հանձնաժողովում վեճի քննարկման ընթացքում կողմերի ներկայացուցիչները կարող են հրավիրել մասնագետներ (խորհրդատուներ, փորձագետներ եւ այլն): Գործատուն պարտավոր է ստեղծել անհրաժեշտ պայմաններ հաշտեցման հանձնաժողովի աշխատանքների համար:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հաշտեցման հանձնաժողովները ձեւավորվում են կոլեկտիվ աշխատանքային վեճի կողմերի հավասար թվով ներկայացուցիչներից: Հաշտեցման հանձնաժողովի անդամների ընդհանուր թիվը որոշվում է կողմերի համաձայնությամբ: Հաշտեցման հանձնաժողովը ստեղծվում է առաջադրված պահանջները մերժելու մասին գրավոր որոշումը պահանջներ առաջադրած կողմին տրամադրելու օրվանից հետո՝ յոթ օրվա ընթացքում: Հանձնաժողովի կազմը ամրագրվում է արձանագրությամբ:

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Որո՞նք են ամուսնության անվավերությունը բացառող հանգամանքները:

Լիլիթ Գալստյան (29 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Դատարանը կարող է ամուսնությունը վավերական ճանաչել, եթե ամուսնությունն անվավեր ճանաչելու մասին գործի քննության պահին վերացել են դրա կնքմանն արգելք հանդիսացող հանգամանքները: Կնոջ հղիության կամ երեխա ծնվելու դեպքում, կամ եթե դա են պահանջում անչափահաս ամուսնու շահերը, ինչպես նաեւ ամուսնությունն անվավեր ճանաչելու մասին անչափահաս ամուսնու համաձայնության բացակայության դեպքում դատարանը կարող է մերժել ամուսնացող անձի հետ կնքված ամուսնությունն անվավեր ճանաչելու մասին հայցը: Դատարանը չի կարող ամուսնությունը ճանաչել կեղծ, եթե նման ամուսնություն գրանցած անձինք մինչեւ դատարանի կողմից գործի քննությունը, փաստորեն, ընտանիք են կազմել:

ՀՀ քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ամուսնության դադարումից հետո ամուսնությունը չի կարող անվավեր ճանաչվել, բացառությամբ ամուսինների միջեւ օրենքով արգելված ազգակցական կապի առկայության կամ ամուսնության պետական գրանցման պահին ամուսիններից մեկի կողմից այլ չլուծված ամուսնության մեջ գտնվելու դեպքերի:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հայ շախմատիստները շարունակում են մասնակցել Saint Louis Masters միջազգային մրցաշարին:

Մրցաշարի 4-րդ տուրում երեկ Հայաստանի ներկայացուցիչներից Աննա Սարգսյանը հաղթանակ է տոնել:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-5 - 9 -1 + 2
Կոտայքի լեռներ	-6 - 8 -1 +1
Կոտայքի նախալեռներ	-3 - 5 +3 + 5
Գեղարքունիք	-7 - 11 - 2 + 1
Լոռի	- 4 - 8 +1 + 4
Տավուշ	0 - 4 +3 + 6
Արագածոտնի լեռներ	- 6 - 9 0 - 2
Արագածոտնի նախալեռներ	-1 - 4 + 4 + 7

Արարատ	0 - 4 +6 + 8
Արմավիր	-1 - 5 + 5 + 7
Վայոց ձորի լեռներ	-6 - 10 0 - 2
Վայոց ձորի նախալեռներ	-1 + 2 +12 + 14
Սյունիքի հովիտներ	0 + 3 + 8 + 10
Սյունիքի նախալեռներ	- 4 - 8 - 1 + 4
ԼՂՀ	- 3 - 7 0 + 6
Երեւան	0 - 2 + 2 + 4

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **5.12.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*